

ՀԱՐՍՈՒԹԵԱՆ ՇՆԱՄԱՐԻՑ

ԻՍԱՅՈՒՄԸ (Սարգիս Շնորհալի)

Հարստութիւնն, եթէ Աստուծմէ առիր, վատահ եղիք եւ հաւատա՛, որ զաւակիդ կրկին առատութեամբ կու տայ եթէ ուզես: Պիտի ըսես, ինչպէ՞ս եթէ ուզես: Ինչ, որ Աստուծմէ պարզեւ առիր եւ ունիս՝ դարձեալ Աստուծոյ պարզեւէ, իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ճգէ եւ ոչ թէ հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած գրութիւնդ անոր վերակացու ճգէ Աստուծոյ անսահման գրութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: Սորվեցո՞ր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: Սորվեցո՞ր զԱստուած պաշտել եւ ոչ թէ մամնան: Սորվեցո՞ր հետնաւոր բաներու ցանկալը եւ ոչ թէ երկրաւորներուն: Վարժեցո՞ր պատուաէր ըլլալ երկնային պատիհին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաբախ փառքին: Սորվեցո՞ր սիրել ոչ թէ առօրեայ կեանքը, անցաւորը, որ լի է դառնութեամբ, թշուարութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիւրապատիկ հանգիստով լեցունը: Իսկ եթէ անիրաւութենէն զրկանքներէ հաւաքած հարստութիւնդ զաւակներուդ պիտի թողուս, գիտցիք եւ հաւատայ, թէ ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, ինչ Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի:

Արդ, առաջին հերթին ինչո՞ւ Աստուծոյ բարկութեան պատճառները չես ոչնչացներ բաշխելով եւ տալով ինչերդ, այլ՝ Անոր բարկութեան կցորդ ու բաժնեկից կը դարձնես զաւակդ:

ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐԸ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Ե.- ԵՐԵԿՈՅԵՍՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Որդույն Աստուծոյ:

Անունը ինքնին կը յիշեցնէ մեզի, թէ արդէն օրը երեկոյ է, ֆիզիքական բոլոր աշխատանքներուն աւարտն է, ուր հաւատացեալը գոհունակ սրտով իր երախտագիտութիւնը կը յայտնէ այն բոլոր բարիքներուն համար, որ Աստուած անցնող օրուան ընթացքին շնորհած է իրեն:

Երեկոյեան ժամերգութիւնը կը սկսի հետեւալ մաղթանքով.- «Ես առ Աստուած կարդացի, եւ նա լուաւ ինձ յերեկոյս՝ ի վաղորդայն՝ եւ ի հասարակ աւուր»:

Երեկոյեան ժամերգութիւնը ցարդ ամէն երեկոյ կը կատարուի վանական կեանքէն ներս եւ Միջին Արեւելքի ծինական եկեղեցիներուն մէջ:

զ.- ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ, որ կը մատուցուի ի դէմս Հոգույն Սրբոյ...

ՔԱՍԹԵ

ՃՐԱԳ ՇԱԲԱԹՍԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - [facebook-h.karajerak](https://facebook.com/h.karajerak) ՃՐԱԳ ԹԵՐԹ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՂԻ ՃՐԱԳ Է ՈՒ ԽՈՎԻՆԵՐՈՂԻ ԼՅՅԱ (Ա. 119.105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՕԳՈՍՏՈՒ 2021

ԹԻՒ 33

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Երգ 4.9-15, 8.14: Ես. 7.10-16: Գլ. 3.29-4.7:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒԿԱՆԻ 2.1-7

ՎԵՐԱՓՈԽՍՎԱՆ Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՏՕՆ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒԿԱՆԻ 2.1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսրը իրամանագիր հանեց, իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէք քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրեաստանի Բերդեհէմ քաղաքը՝ Դաւիթ քագաւրի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յդի էր:

Բերդեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծննաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ԱՌԱՎԱՅՑ (Գ. 23, 19-25)

Որդեակ իմ, լսէ՛ ու իմաստուն եղիք եւ քու սիրտդ դէպի ուղիդ նամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շոայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուած հանդերձներ կը հագցնէ:

Հնագանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանեարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող քու հայրդ ու մայրդ քու վրախանան ու քեզ ծնանողը թող ցնծայ:

ՍՈՒՐԱԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ



«Վերափոխում» բառը, զրաբար լեզուով նկատի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրքի: Իսկապէս այ, վերափոխումը Սուրբ Աստուածածինի մահուան յիշապակումն է, որ կը կապարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Հայաստանեայց եկեղեցւոյ հինգ դրանարներէն մէկն է: Այս փօնին առթի մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի զայտուպն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, փօնը կ'ակնարկէ այն պատահարին, ըստ որուն Քրիստոս ինք իջած իր մօր մահուան առթի եւ զինք փոխադրեց երկինք:

ԿԱՌՈՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾՈՒԾԻՆԻ ՕՐԸ. ԴԶ (գրաբար)

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն շահագգեստուք պայծառացեալք լուցանեին զըլապտերս իւրեանց եւ միաձայնեալ ասէին, օրինեալ ես ամէնօրինեալդ ի կանայ:

(Աշխարհաբար)

Այսօր միասին հաւաքռուած սուրբերը՝ երանելի առաքեալ ներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր գգեստներով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսէն՝ օրհնեալ ես դուն կիներուն մէջ ամէնօրհնեալ:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄԻ ԱՒԱՆՈՒԹԻՒՆ- ՆԵՐԵՆ՝ ԽԱՂՈՂՈՐՅՆԵՔ



«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյալից սովորութիւն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրեւ շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաքրիստոնէական շրջանին այս բարոյալից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուէր աստուածներուն, ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերումը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցին եւ անոր միջոցաւ, ուր ու անիրամթեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. պատարագի, Ս. հաղորդութեան, Ս. պսակի խորհուրդներուն մէջ խորիրդանշական գործածութեան կը դրուի»:

ԲԱՐԵՒԾՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ Ս. ԿՈՅՑ ԱՍՏՈՒԱԾՈՒՆԻՆ

Կը խոնարհինք քու առշեւդ, Սուրբ Աստուածածին, եւ կ'աղաւենք քեզի, ո՞վ անարատ Կոյս. բարեխօսւ՛ մեր անձերուն համար, եւ խնդրէ՛ քու Միածին Որդիեղ, որ մեզ ազատէ փորձութիւններէն եւ մեր բոլոր նեղութիւններէն: Ամեն

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ ԳԱՍ

ԱՐԱՐԻՉ ԵՒ ԱՐԱՐԱԾՆԵՐ ՄԻԵՒՆՈՅՆ ՄՎՅՐԸ ՈՐՄԻՆ

Աստուածամօր վերափոխումը, որ տեղի ունեցաւ իր ննջման երրորդ օրը, անոր մարմնաւրապէս երկինք փոխադրուելուն տօննէ: Երկինք եւ երկնային մարմիններ մեծապէս ցնծացին, երբ տեսան իրենց Արարիչին մայրը մուտք կը գործէր երկինք: Ցնծացին եւ ուրախացան, որովհետեւ մայր չունեին եւ մայր ունեցան. Գորովի եւ գթութեան մայր, սիրելի ու սիրող մայր:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ

Երկինքը ունէր զԱստուած իբրեւ հայր, բայց չունէր մայր: Աստուած կամեցաւ, որ երկինք եւ երկնային մարմիններ ունենան մայր, եւ անոնք ունեցան սուրբ Կոյսը իբրեւ մայր: Մայր: Որքան գեղեցիկ բառ: Այնքան գեղեցիկ, որ Աստուած անգամ փափաքեցաւ զայն առնել իր շրջներուն վրայ: Աստուած տեսաւ, թէ որքան փափաքելի ու անոյշ է մայր ունենալը, մամաըսելը եւ ուզեց, որ ինքն ալ մամա ունենայ: Եւ ընտրեց Մարիամը իբրեւ իր մայրը, զայն դարձնելով բոլորիս մայրը: Փառք Յիսուսին, յափտենականութեան մէջ մենք պիտի չմնանք առանց մօր:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

**ԵՐԲ ՄԵՊ ՔԵՐՈՒԴ ԿԸ ԳԻՏԱԿՅԱՆ ԵՐ
ՎՈՒԶԵՍ ԽՈՍՏՈՎԱԿՅԱՆ,**
ԿՎՐԴԱԿ ՄՎՃՄՈՍ 32

Երանի՝ անոր, որուն յանցանք-ները բողոքիւն գտան, որուն մեղքերը ներուեցան: Երանի՝ այն մարդուն, որուն մեղքը Տէրը նկատի չառներ, որուն հոգիին մէջ նենգութիւն չկայ: Որքան ատեն, որ մեղքերս չխստովանեցայ, ուկորներս մաշեցան օրն ի բուն աղաղակելէն: Գիշեր ցերեկ հարուածներ տեղացուցիր իմ վրաս, Տէ՛ր, եւ իմ ոյժս խամբեցաւ, ամրան տաքէն խորցած խոտի պէս: Սեղրս քեզի յայտնեցի, աճօրէնութիւնս չծածկեցի: Ըսի՝ «Տիրոջ խոստովանիմ յանցանքներս», եւ դուն ներեցիր մեղքս, ու ջնջեցիր պատիմ: Ասոր համար աստուածապաշտ ամէն մարդ աղօքքով պիտի դիմէ քեզի ամէն անգամ, որ անդրադառնայ, թէ մեղքի մէջ կը գտնուիմ, եւ վիշտերը նոյնիսկ եթէ հեղեղի պէս զինք ողողեն, բնաւ պիտի չկարենան մօտենալ իրեն: Դուն ես ապաստանարան: Զիս նեղութենէ զերծ կը պահես, եւ ազատութեան երգերով կը շրջապատես:

Քեզի պիտի սորվեցնեմ,- կ'ըսէ Տէրը,- ցոյց պիտի տամ, թէ ինչ ճամբով պէտք է երթաս պիտի խորտեմ քեզ, եւ աչքս քու վրայ պիտի ըլլայ:

ՄԻՇՍ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԴԱՆՔ